ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 25 » մայիս 2026թ. No 2947 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի կետ 1-ի, ԵՏՀ խորհրդի 2016 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 78-որոշման կետ 66-ի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման N 01/2606-26 առ 18.05.2026թ. փորձագիտական եզրակացությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Եվրասիական տնտեսական միության գրանցման (ԵԱՏՄ գրանցում, ռեֆերենտ երկիր) ընթացակարգով գրանցել երաշխավորված թվով 1 դեղը՝ համաձայն հավելված 1-ի:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝

1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը և Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին:

3. «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա. Բաղրյանին՝

1) Ապահովել սույն հրամանով գրանցված դեղի վերաբերյալ տվյալների հրապարակումը գրանցամատյանում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 32-րդ ԵՏՀ խորհրդի 2016 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 78-որոշման 76-րդ կետի պահանջների:

2) Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցված դեղի վերաբերյալ տվյալների ընդգրկումը գրանցամատյանում՝ լիազոր մարմնի հաստատված կարգով:

4.Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ.Բաբախանյանին՝

1) ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

5. Դեղի գրանցման ժամկետը սահմանվում է համաձայն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նոյեմբերի 3-ի թիվ 78 որոշման 77-րդ և 180-րդ կետերի, հաշվարկը սկսվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ Լ. ՆԱՆՈՒՇՅԱՆ

Invalid signature

X

ԼԵՆԱ ՆԱՆՈՒՇՅԱՆ

Signed by: NANUSHYAN LENA 5114750164

Հավելված

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի

2026 թվականի մայիսի «25 » - ի N2947 - Ա հրամանի

Եվրասիական տնտեսական միության գրանցման (ԵԱՏՄ գրանցում, ռեֆերենտ երկիր) ընթացակարգով գրանցված դեղերի ցանկ

ՀՀ	Առևտրային անվանումը	Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը	Դեղաձևը	Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը	Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր)	երկիր	Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր)	երկիր	Բաց թողնման կարգավիճակը	եզրակացության համար և ամսաթիվ
1	Բրիմօպտիկ-Ն	թիմոլոլ (թիմոլոլի մալեատ), բրիմոնիդին (բրիմոնիդինի տարտրատ)	ակնակաթիլներ	5մգ/մլ+2մգ/մլ; 10մլ սրվակ-կաթոցիկ	Լիկվոր ՓԲԸ, 0089, Երևան, Քոչինյան փ., 7/9	Հայաստանի Հանրապետություն	Լիկվոր ՓԲԸ, 0089, Երևան, Քոչինյան փ., 7/9	Հայաստանի Հանրապետություն	Դ	24107 (020680) 15.05.2026